Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 06

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 30 նոյեմբերի 2022թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են (Կառավարման խորհրդի անդամներ)՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Գնել Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արմեն Դանիելյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն
Բացակայում են՝	
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Մասնակցում են նաև՝	
Արայիկ Հարությունյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար
Աշոտ Առուշանյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական
Հովհաննես Մարտիրոսյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար
Բագրատ Նահապետյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

Կառավարման խորհրդի անդամներ Անի Իսպիրյանը և Արման Պողոսյանը տեղեկացրել են, որ 2022 թվականի նոյեմբերի 30-ին լինելու են գործուղման մեջ և բացակայելու են Հայաստանի Հանրապետությունից, իսկ Արմենուհի Հարությունյանը նույն ժամանակահատվածում մասնակցելու է «Հանուն ժողովրդավարության» գագաթնաժողովի ազգային համակարգողների նիստին, ուստի վերջիններս չեն կարող ապահովել իրենց մասնակցությունը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստին:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու վերաբերյալ

(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ.Մարտիրոսյան)

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու վերաբերյալ:

(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ.Մարտիրոսյան)

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Կողմ 7, Դեմ 0

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

Կողմ 7, Դեմ 0

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ օրակարգում կատարել լրացում և հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Կողմ 7, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստին ներկա էր նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ով նիստի սկզբում տեղեկացրեց, որ տեսչական մարմինների հետ կապված որոշակի գործընթացներ են այս պահին տարվում, որոնց նպատակը ընդհանուր տեսչական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացումն է: Աշխատակազմի ղեկավարը փաստեց, որ տեսչական մարմիններում այս պահին անհրաժեշտություն կա նաև ժամանակակից գործիքակազմերի ներդրման և կիրառման, օրենսդրական խորքային բարեփոխումների, որոնք կհեշտացնեն Տեսչական մարմինների աշխատանքը: Աշխատակազմի ղեկավարի խոսքով օրենսդրական լուրջ խնդիրներ են առկա, որոնք տարիներ շարունակ միայն արձանագրվել են և չեն ստացել պատշաճ լուծումներ, ինչը հանգեցրել է թե՛ տեսչական մարմինների գործունեության արդյունավետության նվազմանը, թե՛ վարչարարության առումով լուրջ խնդիրների: Արայիկ Հարությունյանը նշեց, որ հանձնարարականներ են տրվել տեսչական մարմիններին՝ կառավարման խորհուրդներում կայացվող որոշումները Վարչապետի աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ, քանզի բազմաթիվ որոշումներ են ընդունվում խորհուրդներում, որոնք պարզապես արձանագրվում են տարեկան ամփոփումների ժամանակ և որևէ հետևանք չեն ունենում:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը մինչ Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը ներկայացնելը, անդրադարձավ 2022 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ կատարված աշխատանքներին: Տեսչական մարմի ղեկավարը նշեց, որ 2022 թվականին նախատեսված է եղել իրականացնել ծրագրային 130 ստուգում, որից այս պահի դրությամբ իրականացվել է 122-ը, իսկ արտածրագրային ստուգումների դեպքում իրականացվել է թվով 127 ստուգում: Այնուհետև անդրադարձ կատարվեց 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրին, տեսչական մարմնի ղեկավարը ներկայացրեց ծրագրում ներառված ընդհանուր տեղեկատվությունը.

«ԲԸՏՄ-ին իր լիազորությունների իրականացման նպատակով 2023 թվականի համար պլանավորվել է հատկացնել 1,103,124,300 ՀՀ դրամի բյուջե, որից միայն աշխատանքի վարձատրությունը կազմել է 846,387,100 ՀՀ դրամ: Պատշաճ, ժամանակին և թափանցիկ վերահսկողություն իրականացնելու նպատակով Տեսչական մարմինն այս պահին կարիք ունի բարելավելու կադրային ներուժն ու նյութատեխնիկական հագեցվածությունը: Իրականացվելու է թափուր հաստիքների համալրում, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործում:

Շարունակելու ենք համագործակցությունը համաձայն 2021 թվականին Երևանի պետական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Հայաստանի ազգային ագրարային համալսարանների հետ կնքված հուշագրերի շրջանակներում տարվող աշխատանքները, ինչպես նաև շարունակական բնույթ են կրելու Կովկասի բնության և Բնության Համաշխարհային հիմնադրամների հետ տարվող աշխատանքները: 2022 թվականի ընթացքում այս երկու կազմակերպությունների կողմից Տեսչական մարմնին են տրամադրվել մի շարք ժամանակակից տեխնիկաներ, այդ թվում անօդաչու թռչող սարքեր և ուզում եմ հայտնել, որ Տեսչական մարմինն այս պահին արդեն ավարտին է հասցնում անօդաչու թռչող սարքերի չափագրման աշխատանքները, ինչը մեզ հնարավորություն է տալու այն օգտագործել որպես գործիք ընդերքի վերահսկողության ոլորտում՝ կրճատելով պահանջվող ֆինանսական, ժամանակային և մարդկային ռեսուրսները»:

Տեսչական մարմնի ղեկավարը նշեց, որ գործունեության տարեկան ծրագիրը կազմելու նպատակով իրականացվել է տնտեսավարող սուբյեկտների դասակարգում ըստ ռիսկայնության աստիճանի, բացի այդ ռիսկային ոլորտների և տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարողներին բացահայտելու նպատակով տեղեկատվությունը հավաքագրվել է պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, քաղաքացիներից, կազմակերպություններից և այլ աղբյուրներից (ՊԵԿ, ՇՄՆ, ՏԿԵՆ, տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվող հաշվետվություններ, վարչական-վիճակագրական տվյալները, թեժ գծով ստացված ահազանգեր):

Ընդհանուր վերահսկման մեթոդաբանության արդյունքում, առկա են 3435 տնտեսավարող սուբյեկտներ, որոնք գործունեության տարեկան ծրագրում ներկայացված են ըստ մարզային համամասնության (առանձնացված են նաև ըստ գործունեության տեսակների): Համաձայն ծրագրում առկա վերլուծությունների առավել ռիսկային ոլորտներն են՝

- մետաղական հանքավայրերի շահագործում,
- ոչ մետաղական հանքավայրերի և հանքային ջրերի շահագործում ,
- անտառային տնտեսություններ և հատուկ պահպանվող տարածքներ,
- էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում,
- թափոնների տեղադրում և ոչնչացում,
- շինարարություն,
- ոռոգում և ջրամատակարարում ,
- ձկնաբուծություն,
- արտադրություն:

Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը նշեց, որ 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվում է իրականացնել 155 ստուգում, որից 109-ն ունեն բարձր ռիսկայնություն, 39-ը միջին ռիսկայնություն և 7-ը ցածր ռիսկայնություն, որոնք համաչափ բաժանված են ըստ ՀՀ վարչատարածքային մարզերի և ըստ տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա թողած առավել ռիսկային չափանիշների հավանական բացասական ազդեցության:

Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների թվաքանակն՝ ըստ եռամսյակների հետևյալն է. 1-ին եռամսյակ՝ 38 ստուգում, 2-րդ եռամսյակ՝ 43 ստուգում, 3-րդ եռամսյակ՝ 42 ստուգում, 4-րդ եռամսյակ՝ 32 ստուգում: Ամփոփելով ստուգումների տարեկան ծրագիրը, Տեսչական մարմնի ղեկավարը վստահեցրեց, որ նախատեսված 155 ստուգումներից բացի այլ մարմիններից ստացված

գրություններին և ահազանգերին կտրվեն համապատասխան ընթացք՝ մոբիլիզացնելով առկա ռեսուրսները:
Կառավարման խորհրդի անդամ Բարդուխ Գաբրիելյանի այն հարցին թե ինչպես է Տեսչական մարմինը վերահսկում ապօրինի ձկնորսությունը, Տեսչական մարմնի ղեկավարը հայտնեց, որ գործընկեր պետական մարմինների հետ համատեղ իրականացվում են կանխարգելիչ միջոցառումներ, որոնք ուղղված են նման հարցերի կարգավորմանը:

Վարչապետի աշխատակազմի ղեկավարի խոսքով բոլոր տեսչական մարմիններում առկա են նույն թերությունները, որոնք ընդհանուր առմամբ կապված են վերլուծությունների ոչ պատշաճ իրականացման հետ, ինչն էլ իր հերթին ազդեցություն է ունենում տարեկան ծրագրերի վրա: Եթե հստակ չեն տրվում ռիսկերի և խնդիրների վերաբերյալ նկարագրություն, ապա հաջորդ տարիներին Տեսչական մարմնի գործունեության արդյունավետությունը գնալով կնվազի: Աշխատակազմի ղեկավարը խոսեց Արաքս գետի ավազանում իրականացվող ավազի արդյունահանման վերաբերյալ, հարցի համապարփակ քննարկման արդյունքում որոշվեց այն ներառել Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրում, ի հավելումն Տեսչական մարմնի ղեկավարը նշեց, որ Տեսչական մարմինն իր կողմից առաջարկել է ներդնել GPS համակարգ, որի օգնությամբ կարելի է պարզել օրինակ մեքենաների աշխատանքը, բեռնվածության աստիճանը, գտնվելու վայրը:
Աշխատակազմի ղեկավարը անդրադարձավ այն հարցին, որ բոլոր Տեսչական մարմիններում առկա է մարզերում նախատեսված ստուգումների ոչ հավասարաչափ բաշխում և կան տարածքային ստորաբաժանումներ, որտեղ պետական տեսուչները ավելի քիչ են ծանրաբեռնված այլ տարածքային ստորաբաժանումների համեմատ:
Ի պատասխան աշխատակազմի ղեկավարի հարցին, Հովհաննես Մարտիրոսյանը նշեց, որ բաշխումն իրականացվում է ըստ ռիսկայնության մեթոդաբանության, բացի այդ հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ այս պահին կան տարածքային ստորաբաժանումներ, որտեղ առկա է համալրվածության խնդիր, իսկ հավելյալ

ծանրաբեռնվածության դեպքում Տեսչական մարմինը ստիպված կլինի աշխատակիցներ ներգրավել այլ տարածքային ստորաբաժանումներից:

Ի հավելումն Տեսչական մարմնի ղեկավարի խոսքին, Վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական Աշոտ Առուշանյանը նշեց, որ ԲԸՏՄ-ի դեպքում նախատեսված ստուգումները բաշխվել են ըստ առկա հաստիքների, քանզի վերջին շրջանում շատ ակտիվ կերպով իրականացվում է հաստիքների համալրում և այս պահին առկա են թափուր հաստիքները համալրելու նպատակով մի շարք հայտարարված մրցույթներ:
Խորհրդի նախագահ Հակոբ Սիմիդյանը հավելեց, որ այս պահին Շրջակա միջավայրի նախարարությունում իրականացվում են օրենսդրական ահռելի բարեփոխումներ, ինչը հետագայում կհանգեցնի Տեսչական մարմնի աշխատանքի ծավալի մեծացման, ուստի նախատեսված ստուգումների թիվը արդարացված է:
Հովհաննես Մարտիրոսյանն արձանագրեց, որ ստուգումների տարեկան ծրագիրը կազմվել է հաշվի առնելով նախորդ տարվա դինամիկան և այլ մարմիններից ստացված գրությունները, որոնց թերակատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կարող են ոտնահարվել տնտեսավարողների շահերը:
Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող Արմեն Դանիելյանը նշեց, որ պետք է հետևել առկա դինամիկային և կանխատեսումներ կատարել, թե ինչքանով է վերլուծվում իրականացված աշխատանքները, պարզել իրականացված վարույթների և ստուգումների հիմքերը և դրա արդյունքում նոր կազմել ստուգումների տարեկան ծրագիրը:
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը նշեց, որ ստուգումների քանակը ավելացնելու դեպքում այլ մարմիններից և քաղաքացիներից ստացվող ահազանգերը ժամանակի ընթացքում կկրճատվեն և այլևս անհրաժեշտություն չի առաջանա առանձին գրություններով դիմել Տեսչական մարմնին:

Տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման ղեկավար Բագրատ Նահապետյանի առաջարկությամբ և խորհրդի անդամների համաձայնությամբ

օրակարգում ներառվեց նաև որակի ապահովման ստորաբաժանման 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը: Բագրատ Նահապետյանը ներկայացրեց ծրագրում առկա միջոցառումներն ու հիմնական ուղղությունները, որոնք իրականացվելու են որակի ապահովման ստորաբաժանման կողմից 2023 թվականի ընթացքում:

Աշխատակազմի ղեկավարը արձանագրեց այն հարցը, որ որակի ապահովման ստորաբաժանման կողմից ներկայացվող հաշվետվություններում առկա խնդիրներն ու մեկնաբանությունները պետք է կարմիր լույս լինեն դրանց հետագա լուծման և խնդիրների առաջացման աղբյուրների բացահայտման համար:

Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը ամփոփելով Կառավարման խորհրդի նիստը հավելեց, որ առաջին հերթին պետք է վերանայել Կառավարման խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում գումարել արտահերթ նիստեր՝ առկա խնդիրների քննարկման և դրանց լուծմանն ուղղված լավագույն մեխանիզմների դուրսբերման նպատակով:

Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը նիստի ամփոփման ընթացքում նշեց, որ Կառավարման խորհուրդների աշխատակարգերի վերանայման և դրանցում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է նկատվում, ուստի առաջիկայում պետք է ձեռնարկել համապատասխան քայլեր այդ ուղղությամբ:

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Հ. Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ

(խորհրդի քարտուղար) _____Վ. Բարսեղյան